

ռակորդս իրերաց. եւ մինչ չեւ յաջողեալ հանդարտեալ գնոսա՝ մեռանէր, գլխաւոր ամենեցուն եւ ժառանգ աթոռոյն կացուցեալ զԽութալէտտին, որում կին ածեալ էր զդուստր Սալահէտտինի, պաշտատական ընդունելով հազար բիզանդ սառակին: Անդէն ընդ պայազատելն՝ սկսաւ սա ոգորել ընդ եղբարսն, գրաւեաց զՄելիտինէ՝ զբաժին Միւլզգէտտին Գայսար կամ Չէսար-շահ եղբոր իւրոյ, որ հալածեալ անկաւ առ Սալահէտտին. այլ եւ ինքն Խութալէտտին հալածեցաւ ՚ի Ռուզնէտտին Սիւլէյման (Ղըյասէտտին) եղբորէն, որ յառաջն տէր էր Եւդոկիոյ, եւ արդ բռնացաւ ՚ի վերայ հայրենի աթոռոյն, թողլով նախորդին իւրում զԱլպստան, յորմէ հալածեաց զմիւս եւս եղբայրն՝ զՔէլիստսրու. յետինս այս զառաջինն փախուցեալ անկաւ ՚ի Բերիա, ուր այն ինչ մեծ կողմնակալ առաքեալ էր Սալահէտտին զորդի իւր Տահէր. ապա թողեալ զսա՝ ապաւինեցաւ ՚ի մերս Լեւոն, եւ ՚ի սմանէ եւս հրաժարեալ չոգաւ ՚ի Տրապիզոն եւ անտի ՚ի Կ. Պօլիս, ուր եւ եկաց զամս տասն, մինչեւ մեռաւ եղբայրն բռնակալ, եւ դարձաւ նուաճեաց զաթոռ նորա: Բայց մինչ կայրն դեռ ՚ի Սիսուան՝ ընկալաւ ՚ի նմանէ Լեւոն բաղդիւ կամ ճարտարութեամբ իւրով՝ զմասն ինչ կալուածոց նորին եւ զբերդից՝ որ յերկրին Ալպստանայ. որով անդրաձգեաց զսահմանս Կիլիկիոյ եւ ընդ հիւսիսի արեւելից ցԱնտիտարոս: Այսպիսեօք համարձակ գործառնութեամբք, մանաւանդ հակառակութեամբ եղբարցն Իկոնիոցոց, դիմելով միոյն առ ինքն՝ միւսոյն առ Սալահէտտին, հաւասարորդ իմն սմա թուէր համարել Լեւոն, եւ խոչ ընդ ակն լինէր: Դարձեալ, զի եւ յարեւելից կուսէ գրաւեալ էր, ըստ նախ ասացելոցս, զՊաղրաս եւ զԴարպասակ եւ զորս առ նոքօք, եւ խոնարհագոյն եւս զծովեզերսն մինչեւ ՚ի Հռոսոս, որ բնական բաժինք համարէին Պեմունդի Բրնձին Անտիոքայ, զչարեալ սորա՝ այլ եւ ոչ իշխելով ՚ի վեգ գալ ընդ Լեւոնի, իբրեւ լուաւ զգալուստ Սալահէտտինի ՚ի Պերութ՝ չոգաւ առ նա յողջոյն, եւ ՚ի խնդրել զտեղիս ինչ սահմանաց իշխանութեան իւրոյ Անտիոքայ՝ գրաւեալս յօտարէ, որպէս յիշեն պատմիչք վարուց մեծի սուլտանին, առանց յիշատակելոյ զանուն Լեւոնի, եւ ոչ զկարեւորագոյնն եւս որ յետ այնր դէպս, զոր ուսանիմք ՚ի մերոյս կիլիկեան պատմչէ:

Շատ էր այս ամենայն ՚ի դրդել զոգի հզօրին այնորիկ ՚ի վերայ Լեւոնի, որ ՚ի միջի մեծագունից իշխանաց ահաբեկ նուաճելոց՝ անահ իմն ճողոպրել թուէր. եւ զի մի՛ որպէս ջանայրն՝ արդարեւ մեծասցի, կամ համարեացի ազատ ոմն գոլ յամենեցուն նուաճողէն, պատգամ առաքեաց